

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

10.08.2000 թ.

N 36

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՍՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ
ՓԱՍՏԱՅԻ ԿՈՐՄՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ) ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 03.02.2000 թ. «ՀՀ կառավարության 1999 թ. ապրիլի 29-ի թիվ 272 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 48 որոշման

Հրամայում եմ

1. Հաստատել «Շինարարությունում հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) նորմաները»:

2. Քաղաքաշինության, գեոդեզիայի և քարտեզագրման ԳՀՆԻ ՊՓԲԸ (Գ. Մուշեղյան) տալ լրատվություն շահագրգիռ նախարարություններին, գերատեսչություններին, կազմակերպություններին և համաձայն նրանց պահանջարկի ապահովել նշված նորմաների հրապարակումը և տարածումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել նախարարի տեղակալ պրն. Հ. Հովհաննիսյանի վրա:

Նախարար՝

Լ. Հակոբյան

Ն Ո Ր Մ Ա Ն Ե Ր

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՍՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ
ԳՈՒՅՔԻ ՓԱՍՏԱՅԻ ԿՈՐՄՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ)**

1. ԿԻՐԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ

Սույն նորմաները մշակված են կիրառվելու Հայաստանի Հանրապետության շինարարության բնագավառում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Նյութերի և պատրաստվածքների բնական կորուստները հետևանք են արտադրանքի ֆիզիկա-

քիմիական հատկությունների, օդերևութաբանական գործոնների ազդեցության, ոչ կատարյալ տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև նյութերի ընդունման, պահպանման և շինարարության համար բացթողման ժամանակ:

2.2. Բնական կորուստներին չեն վերաբերվում շինարարությունում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

2.3. Բնական կորուստների նորմաները հանդիսանում են առավելագույնները, որոնց սահմաններում թույլատրվում է համախառն եկամտից նվազեցում փաստացի կորստի դեպքում տվյալ տարվա ընթացքում:

3. ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

3.1. Բնական կորստի նորմաները սահմանված են բնական մեծությունից տոկոսային արտահայտությամբ:

3.2. Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորուստը որոշվում է՝

- կորուստներ պահպանման ժամանակ

$$Կ = \frac{\sigma \times \mathcal{L}}{100}, \quad \text{որտեղ՝}$$

Կ - նյութերի կորստի չափն է պահպանման ժամանակ,

σ - պահպանվող նյութի ծավալն է, որն ընդունվում է համաձայն մուտքագրման փաստաթղթերի,

ℒ - նորման է:

- կորուստներ տեղափոխման ժամանակ անկախ տեղափոխման հեռավորությունից

$$Կ = \frac{\sigma \times \mathcal{L}}{100}, \quad \text{որտեղ՝}$$

Կ - նյութերի կորստի չափն է տեղափոխման ժամանակ,

σ - տեղափոխվող նյութի ծավալն է բնական մեծությամբ (մ², մ³, տ և այլն), որն ընդունվում է տրանսպորտային բեռնագրերով գործարան-պատրաստողից մինչև պահպանման վայրը (պահեստ, բազա, շին. հրապարակ) և պահպանման վայրից մինչև օբյեկտ:

ℒ - նորման է:

ՆՅՈՒԹԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

| Հ/Հ | Նյութերի, կառուցվածքների և պատրաստվածքների անվանումը | Բնական կորուստների նորմաները բնական մեծությունից տոկոսային արտահայտությամբ | | |
|-----|---|--|------------------------------|------------------------------|
| | | Պահպանման (պահեստավորման) ժամանակ | Երկաթգծով տեղափոխման դեպքում | Ավտոմոբիլ. տեղ. փոխ. դեպքում |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ցեմենտ | 0.2 | 0.5 | 0.4 |
| 2 | Խիճ, խարամ, պեմզա | 0.5 | 1.28 | 1.4 |
| 3 | Ավազ | 0.78 | 1.35 | 2.1 |
| 4 | Ավազա-մանրախիճի խառնուրդ | 0.5 | 1.35 | 2.1 |
| 5 | Մանրախիճ | 0.59 | 1.29 | 1.5 |
| 6 | Կավիճ, կիր, ալիբաստր (գիպս) | 0.7 | 1.08 | 1.1 |
| 7 | Սոսինձներ, ներկանյութեր, թթուներ և հեղուկ տեսքով այլ քիմիական նյութեր | 0.2 | 0.4 | 0.45 |
| 8 | Չոր ներկեր և չոր տեսքով այլ քիմիական նյութեր (փոշենման) | 0.1 | 0.2 | 0.24 |
| 9 | Աղյուս շինարարական | | 3.5 | 4.8 |
| 10 | Աղյուս սիլիկատային | | 1.3 | 1.0 |
| 11 | Կերամիկական սալիկներ պատերի, հատակների, ճակատների երեսապատման համար, սանիտարային կերամիկական պատրաստվածքներ | | 1.8 | 2.0 |
| 12 | Կոյուղու, դրենաժի կերամիկական խողովակներ | | 2.3 | 2.5 |
| 13 | Ապակի-լուսամուտների, ցուցափեղկերի, տեխնիկական, ձևավոր ապակեպրոֆիլիտ և այլն | | 1.2 | 2.5 |
| 14 | Ապակե պատրաստվածք (ապակե կապոց, երեսպատման սալիկներ և այլն) | | 1.5 | 2.5 |
| 15 | Երեսպատման սալեր տուֆից, կրաքարից, գիպսից | | 2.0 | 2.1 |
| 16 | Երեսպատման սալեր գրանիտից և | | 0.3 | 0.5 |

| | | | |
|----|--|-----|-----|
| | այլ կարծր ապարներից | | |
| 17 | Երեսպատման սալեր մարմարից | 1.1 | 1.5 |
| 18 | Դեկորատիվային սալեր բնական քարերի հումքի վրա | 1.0 | 1.5 |
| 19 | Կանոնավոր տուֆ քար | 2.0 | 2.1 |
| 20 | Բոլոր տեսակի քարեր (բացի ուղիղ ձևի տուֆ քարից) | 1.0 | 1.5 |

Պրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից

7 սեպտեմբերի 2000 թ.

Պետական գրանցման թիվ 117000082